ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 23.13/40960/-10

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի 2010 թվականի հունիսի 9-ին ժամը 15:00-ին կայացած նիստի

քաղ. Երևան

Մասնակցում էին՝

Վ. Ներսիսյանց	ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական
Ա. Գևորգյան	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Գ. Սարգսյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Տ. Դավթյան	ՀՀ ֆինանսների նախարար
Մ. Վարդանյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Ն. Երիցյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Ա. Անդրեասյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Ս. Գալստյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Ս. Ղոնաղչյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Վ. Ենգիբարյան	«Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ-ի նախագահ
Ա. Ոսկանյան	«Տավուշի զարգացման» ՀԿ-ի ներկայացուցիչ
Շ. Միքայելյան	«Աշխատանք և հայրենիք» ՀԿ-ի լիազոր ներկայացուցիչ
Պ. Շահինյան	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ-ի նախագահ
Կ. Ջաղոյան	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Ա. Ռասին	Հայաստանում ԱՄՆ-ի «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն
Ա. Հովսեփյան	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն

MSS09.06.10

Ն. Մարտիրոսյան	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, կառավարման խորհրդի քարտուղար
Շ. Հովսեփյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության փորձագետ
Ն. Հարությունյան	թարգմանիչ

1. ՀՄԿ-ին ներկայացվող 16-րդ հատկացման հայտի և դրան կցվող ներքոնշյալ փաստաթղթերի քննարկում և հաստատում (տեղեկանքները կցվում են)

   ա/ Հատկացման հայտ և եռամսյակային ֆինանսական հաշվետվություն,
   բ/ Հատկացման նախապայմանների հաշվետվություն,
   գ/ Աշխատանքային պլան,
   դ/ Ամփոփ եռամսյակային հաշվետվություն և ցուցանիշների վերահսկման աղյուսակ
   ե/ Գնումների կատարման հաշվետվություն և գնումների պլան

   (Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը և նշեց, որ որ 16-րդ հատկացման հայտով «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ն ակնկալում է ՀՄԿ-ից ստանալ 25,046,945 ԱՄՆ-ի դոլար, որից՝ 24,305,439 ԱՄՆ-ի դոլարն ուղղվելու է Ոռոգվող գյուղատնտեսություն ծրագրի ֆինանսավորմանը: Ընդ որում, այդ գումարի զգալի մասը ենթակա է վճարման 2010 թվականի հուլիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում՝ 17 պոմպակայանների վերականգնման պայմանագրի շրջանակներում՝ ՀՀ մատակարարվելիք պոմպերի համար:

Դրանից բացի՝ նա նշեց, որ կնքված շինարարական պայմանագրերի մեծ մասն ավարտվում է 2011 թվականի հուլիս ամսին և, չնայած այն հանգամանքին, որ ռիսկը մեծ է, այնուամենայնիվ ներկայումս «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ն իրատեսական է համարում պայմանագրերով նախատեսված աշխատանքների ամբողջական իրականացման հնարավորությունը:

Այդ կապակցությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը նշեց, որ ցանկալի կլինի, եթե «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվեն նաև այն ռիսկերը, որոնք

կապված են ծրագրի շրջանակներում կնքված՝ շինարարական պայմանագրերով նախատեսված աշխատանքները մինչև ծրագրի վերջը չհասցնելու հետ:

Քննարկումներից հետո որոշվեց հաստատել ՀՄԿ-ին ներկայացվող 16-րդ Հատկացման հայտը և դրան կցվող փաստաթղթերը:

2. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում «Երրորդ կարգի ջրանցքների վերականգնում (Փաթեթ II)» մրցույթի արդյունքների, պայմանագրի նախագծի և երրորդ կարգի ջրանցքների կառուցման/վերականգնման աշխատանքների արժեքի 15%-ի համաֆինանսավորման պահանջի մասին կառավարող համաձայնագրերում առկա դրույթների մասին հարցի քննարկում և հաստատում (տեղեկանքը կցվում է)

(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը և նշեց, որ մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված ընկերությունների ներկայացրած գնային առաջարկները չեն եղել ամենացածրը: Առկա են եղել երկու ընկերություններ, որոնց կողմից ներկայացված գնային առաջարկներն ավելի ցածր են եղել, սակայն վերջիններս հաղթող չեն ճանաչվել, քանի որ գնահատող հանձնաժողովն անընդունելի է համարել նրանց մրցութային առաջարկները: Մասնավորապես՝ տեխնիկական առաջարկներին կից ներկայացված աշխատանքների ժամանակացույցում հաշվի առնված չի եղել ոռոգման սեզոնը, ջրանցքի փորձարկումը նախատեսված է եղել իրականացնել ձմռանը, ինչը հնարավոր չէ: Դրանից բացի՝ ընկերությունների ֆինանսական ցուցանիշներն ընդունելի չեն եղել՝ ըստ ՀՄԿ-ի կողմից սահմանված չափանիշների, ինչպես նաև դրանցից մեկը չի ներկայացրել նաև նմանատիպ աշխատանքների իրականացման փորձ: Ընդհանուր առմամբ ՀՄՀ-Հայաստան ծրագրի շրջանակներում իրականացվող մրցույթների գնահատման ընթացքում բացի գնային առաջարկից հավասարապես ուշադրություն է դարձվում նաև տեխնիկական առաջարկին և հաղթող են ճանաչվում լավագույն տեխնիկական և գնային առաջարկ ներկայացրած ընկերությունները:

Ինչ վերաբերում է մարզային բաշխվածությանը, ապա նա նշեց, որ «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ը տվյալ ծրագիրն ի սկզբանե բաժանել էր 3 լոտի՝ որպեսզի հնարավորություն տրվեր ապահովելու թվով ավելի շատ կապալառու կազմակերպությունների մասնակցություն, ինչպես նաև նվազեցնելու իրականացման ժամկետային ռիսկերը: Սակայն լոտային բաժանումը չի երաշխավորում, այն, որ նույն ընկերությունը չի կարող հաղթել բոլոր երեք լոտերում, ուստի և «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ը ոչ մի դերակատարություն չէր կարող ունենալ տվյալ հարցում:

Այնուհետև նա հայտնեց, որ գնահատող հանձնաժողովի նշմամբ 3-րդ տեղում գտնվող ընկերությունից այդ փաստաթուղթը պահանջվել է որպես պարզաբանում, քանի որ մրցութային փաթեթում այդ տեղեկությունը բացակայում էր, իսկ մյուս ընկերությունից չի պահանջվել, քանի որ այդ փաստաթուղթն առկա էր, սակայն բացակայում էր հատուկ փորձի մասին նշումն այդ փաստաթղթում, որը հիմք է հանդիսացել գնահատող հանձնաժողովի անդամների համար եզրակացնելու, որ այդ փորձը պարզապես առկա չէ: Նույն ընկերության տեխնիկական առաջարկն անընդունելի է եղել նաև նշված մի քանի այլ պատճառներով, մասնավորապես, տեխնիկական առաջարկին կից ներկայացված աշխատանքների ժամանակացույցում հաշվի առնված չի եղել ոռոգման սեզոնը, ընկերության ֆինանսական ցուցանիշները ընդունելի չեն եղել ըստ ՀՄԿ կողմից սահմանված չափանիշների: Նշված հանգամանքները թույլ են տվել գնահատող հանձնաժողովին կայացնելու համապատասխան որոշում, որը համապատասխանում է ներկայիս գործող գնումների ընթացակարգերին:

Ինչ վերաբերում է գնահատող հանձնաժողովի կազմին, ապա «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը նշեց, որ ընդգրկված են եղել «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի տվյալ ոլորտին առնչվող մեկ մասնագետ, բնապահպան, ֆինանսական ղեկավար, ինչպես նաև «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի միջազգային տեխնիկական խորհրդատուն և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի՝

համայնքների զարգացման մասնագետ՝ որպես դիտորդ, առանց քվեարկության ձայնի իրավունքի: Համաձայն գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունների, որոնք ստորագրված են բոլոր անդամների կողմից, բոլորը միակարծիք են եղել իրենց ընտրության մեջ:

Անդրադառնալով երրորդ կարգի ջրանցքների վերականգնման պայմանագրի ստորագրման հարցին՝ նա նշեց, որ տվյալ պարագայում կսահմանվի վերջնաժամկետ, ըստ որի համայնքները պետք է ամբողջությամբ իրականացնեն համաֆինանսավորումը: Հակառակ դեպքում դուրս կմնան ծրագրից և վերջիններիս փոխարեն կներգրավվեն այլ համայնքներ՝ նախագծային և շինարարական աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ ժամանակի առկայության պարագայում: Ընդ որում, համաձայն կառավարող համաձայնագրերի՝ յուրաքանչյուր ջրագծի շինարարությունն սկսելուց առաջ 15 տոկոս համաֆինանսավորումը պետք է ամբողջությամբ ստացված լինի: Ներկայումս «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ն ունի համայնքների ռեզերվային ցանկ, որոնք ցանկություն են հայտնել մասնակցելու և ապահովելու համաֆինանսավորման գումարները (այդ հայտերը կուսումնասիրվեն և ընդունելի լինելու դեպքում կպատվիրվի նախագիծ՝ տվյալ համայնքին ներգրավելով համապատասխան ծրագրի մեջ): Սակայն դեռևս հնարավոր հստակ չէ ծրագրում ներգրավված համայնքների թիվը:

Անդրադառնալով ապրանքային նմուշների պարբերական թեսթավորման գործընթացին՝ նա առաջարկեց իրականացնել հսկողություն կապալառուների հետ կնքված պայմանագրերի պատշաճ կատարման նկատմամբ, համաձայն որի վերջիններս պետք է ապահովեն նախատեսված ստանդարտներին համապատասխանող նյութերի կիրառում: Եթե իրականացվող թեսթավորման արդյունքներով կապացուցվեն, որ այդ ստանդարտները պահպանված չեն, ապա կձեռնարկվեն համապատասխան միջոցներ:

ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Ս. Գալստյանն առաջարկեց պարզել, թե համայնքների ծրագրում մասնակցությունից հրաժարվելու դեպքում

կներգրավվեն արդյոք նոր համայնքներ (համապատասխան համաֆինանսավորման գումարների առկայության պարագայում), քանի որ հնարավոր է համայնքների մի մասը գումարների բացակայության պատճառով չկարողանա իրականացնել երրորդ կարգի ջրանցքների կառուցման համար անհրաժեշտ 15 տոկոս համաֆինանսավորումը:

ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը նշեց, որ նախատեսված գումարների հնարավոր չծախսման դեպքում «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվեն առաջարկներ՝ նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ իրականացնելու և գումարները ծախսելու ուղղությամբ, քանի որ մինչև օրս ծագում են խնդիրներ, որոնք ձգձգում են շինարարական աշխատանքների կատարման ժամկետները (օրինակ՝ ջրագծերի կարերի մեջ տեղադրվում են ռեզինե խողովակներ, որոնք, ՀՄԿ ինժիներների կողմից վերջերս կատարված ուսումնասիրության համաձայն, պահանջվող ստանդարտներին անհամապատասխան են): Այդ կապակցությամբ նա առաջարկեց կապալառուների համար սահմանել այնպիսի կանոններ, որպեսզի վերջիններս ի սկզբանե օգտագործեն բարձրորակ ապրանքներ (օրինակ՝ իրականացվեն ապրանքային նմուշների պարբերական թեսթավորում, քանի որ ՀՄԿ-ի ստանդարտներն ավելի խիստ են, քան Համաշխարհային բանկի կողմից իրականացվող ծրագրերում առկա պահանջները):

ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական Վ. Ներսիսյանցն առաջարկեց ուսումնասիրել Համաշխարհային բանկի հայաստանյան փորձը, քանի որ այնտեղ նմանատիպ խնդիրներ մինչև օրս չեն ծագել:

Հայաստանում ԱՄՆ-ի «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն Ա. Ռասինը հայտնեց, որ ՀՄԿ-ն հաստատել է այս մրցույթի արդյունքները, սակայն տեղյակ է, որ ՀՀ կառավարությունն իրականացրել է ստուգումներ: Դրանից բացի՝ նա նշեց, որ սատարում է ՀՀ կառավարության կողմից ձեռնարկված ցանկացած քայլին՝ լրացուցիչ ուսումնասիրություն կատարելու, հնարավոր բացթողումները շտկելու և կոռուպցիոն ռիսկերը կանխելու ուղղությամբ:

Այդ կապակցությամբ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ այս մրցույթի շուրջ տեղի են ունեցել բազմաթիվ քննարկումներ, քանի որ նվազագույն գին ներկայացրած ընկերություններից մեկի կողմից ներկայացվել էր բողոք-նամակ: Հարցն ուսումնասիրելու համար ՀՀ վարչապետի վերահսկողական ծառայությանը տրված հանձնարարականի կատարման շրջանակներում իրականացված ստուգումներն արդեն իսկ ավարտված են և առկա է համապատասխան եզրակացություն, համաձայն որի թույլ են տրվել ընթացակարգային բացթողումներ, մասնավորապես՝ 3-րդ տեղում գտնվող ընկերությունից պահանջվել են լրացուցիչ փաստաթղթեր, մինչդեռ 1-ին տեղում գտնվող ընկերությունից այդ նույն փաստաթղթերը չեն պահանջվել: Այսինքն, ուսումնասիրություն արդյունքում որևէ կոռուպցիոն դեպքեր չեն հայտնաբերվել, սակայն առկա են ընթացակարգային բացթողումներ:

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում «Երրորդ կարգի ջրանցքների վերականգնում (Փաթեթ II)» մրցույթի արդյունքները և պայմանագրի նախագիծը.

2) «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ- Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանին հայտարարել խիստ նկատողություն՝ մրցույթի ընթացակարգային պայմանները պահպանելու նկատմամբ պատշաճ վերահսկողություն չիրականացնելու համար:

3. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքների տեխնիկական վերահսկող կազմակերպության կողմից առաջարկվող պայմանագրի փոփոխության նախագծի քննարկում և համապատասխան որոշումների ընդունում (տեղեկանքն ի լրումն կներկայացվի ս/թ. հունիսի 4-ին)

(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը և նշեց, որ 2009 թվականի փետրվարի ամսին «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ը շինարարության տեխնիկական վերահսկողության պայմանագիր է կնքել «Սի Ի էս», «էյ էյջ Թի» և Երևանի պետական ճարտարապետաշինարարական համալսարան կոնսորցիումի հետ: Հետագայում պայմանգիրը փոփոխվել է և կոնսորցիումի վրա դրվել են նաև ծրագրի ղեկավարի գործառույթներ՝ առանց պայմանագրային գումարի ավելացման: Առկա գումարների և պայմանագրով նախատեսված աշխատակազմի առկայության պարագայում կոնսորցիումն ի վիճակի չէ արդյունավետ իրականացնելու ինչպես նմանատիպ բարդ և բազմաբնույթ ծրագրերի վերահսկողություն, այնպես էլ ծրագրի ղեկավարի գործառույթներ: Այդ և լրացուցիչ գումարների ավելացման անհրաժեշտության մասին նշել են նաև վերջերս ՀՀ ժամանած ՀՄԿ-ի ինժեներները:

Քննարկումներից հետո որոշվեց՝ հավանություն տալ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ–Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքների տեխնիկական վերահսկող կազմակերպության պայմանագրի փոփոխության առաջարկին և հետագայում պայմանագրի փոփոխության կատարման հարցին:

4. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում առկա պահուստային ֆոնդերի ծախսման հնարավոր ուղղությունների քննարկում, նախանշում և հաստատում (տեղեկանքը կցվում է)

(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 4-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Այդ կապակցությամբ ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար Ա. Գևորգյանը հայտնեց, որ նշված ուղղություններից առաջնահերթ է համարվում Երանոսի և Աստղաձորի պոմպակայանների կառուցումը, որոնք Սևանա լճի մակարդակի բարձրացման պատճառով հայտնվել են ջրի մեջ: Նմանատիպ երկու պոմպակայան՝ Մարտունու և Ձոլաքարի պոմպակայանները, արդեն իսկ առկա են ծրագրում, որոնք ևս մեծ կարևորություն են ներկայացնում: Ընդ որում, այդ պոմպակայանների նախագծերը կարող են օգտագործվել որպես տիպային նախագիծ նաև Աստղաձորի և Երանոսի պոմպակայանների համար:

Դրանից բացի՝ նա նշեց, որ հաստատման ենթակա մյուս ուղղությունները շինարարության վերահսկողության գումարների ավելացման և պոմպակայանների վերականգնման համար անհրաժեշտ հավելյալ գումարների տրամադրման հարցերն են: Ինչ վերաբերում է մայր ջրանցքների հավելյալ հատվածների վերականգնմանը, ապա այդ ծրագիրը դեռևս ենթակա է քննարկման և ներկա պահին չեն համարվում առաջնահերթ:

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում առկա պահուստային ֆոնդերի ծախսման ներկայացված ընդհանուր ուղղություններին:

2) հանձնարարել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ- Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանին «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում ՀՄԿ-ի հետ սկսել քննարկումների փուլը:

5. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում կնքված 6 Մայր ջրանցքների վերականգնման (Առաջին փաթեթ) պայմանագրի երկարաձգման և հնարավոր նոր ծավալների ավելացման հարցի քննարկում և հաստատում (տեղեկանքը, ՍԱՊԵ և ՍԻԻԷս ընկերությունների նամակների հայերեն թարգմանությունները կցվում են)

(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 5-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը և նշեց, որ համաձայն շինարարության տեխնիկական վերահսկող կամակերպության և «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի ինժիներների եզրակացության՝ ուշացման պատճառները հիմնականում կապված են եղել նախագծերում առկա թերությունների վերացման և հավելյալ աշխատանքների ավելացման հետ: Ուստի, երկարաձգումը հիմնավոր է: Բացի այդ՝ ծրագրի տեխնիկական վերահսկողը պաշտոնապես դիմել է «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ին՝ պայմանագրի երկարաձգման և տուգանքներ չկիրառելու եզրակացությամբ:

Ինչ վերաբերում է նախագծերում առկա թերությունների դիմաց վճարմանը, ապա նա նշեց, որ այն կիարականացվի «Հայջրնախագիծ» ընկերության կողմից:

Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում կնքված 6 Մայր ջրանցքների վերականգնման (Առաջին փաթեթ) պայմանագրի երկարաձգումը:

6. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում կնքված 6 մայր ջրանցքների նախագծման պայմանագրի շրջանակներում Հայջրնախագիծ ընկերությանը կատարվելիք վճարման հարցի քննարկում և հաստատում (տեղեկանքը կցվում է)

(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 6-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Այդ կապակցությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը նշեց, որ ներկայացված հարցի շուրջ առկա է անհամաձայնություն՝ կապված վճարման նկատմամբ կիրառվող տուգանքների չափի հետ: Այսինքն, ՀՄԿ-ի ինժեներները ներկայացնում են այն թերությունները, որոնք առկա են եղել նախագծերում և առաջարկում ընդհանրապես վճարում չկատարել, իսկ նախագծողը նշում, որ իրականացրել է միայն նախնական նախագծերը և բացի այդ ստիպված է եղել աշխատանքներն իրականացնել սեղմ ժամկետներում:

ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Ս. Գալստյանը նշեց, որ նախագծող կազմակերպության կողմից կատարվել է բավականին աշխատանք, սակայն առկա են նաև որոշակի թերություններ:

Հայաստանում ԱՄՆ-ի «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն Ա. Ռասինը հայտնեց, որ նախագծող կազմակերպությունը դեռևս մրցույթի մասնակցելու ժամանակ տեղյակ է եղել ժամկետներին, որոնք հետագայում չեն կրճատվել: Չնայած այն հանգամանքին, որ ՀՄԿ-ի ինժեներներն ի սկզբանե որդեգրել են հայկական կողմին օժանդակելու դիրքորոշում, այնուամենայնիվ նախագծերում առկա թերությունների պատճառով շինարարության ժամկետները դանդաղում են:

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանին՝ ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանի առաջարկությանը համապատասխան «Հայջրնախագիծ» ընկերությանը նախքան վճարելը նախավերջին վճարման գումարից կատարել 15 տոկոսի չափով նվազեցում:

7. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում կնքված 17 պոմպակայանների նախագծերի ուսումնասիրության պայմանագրի ժամկետի երկարաձգման հարցի քննարկում և հաստատում (տեղեկանքը կցվում է)

(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 7-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում կնքված 17 պոմպակայանների նախագծերի ուսումնասիրության պայմանագրի ժամկետի երկարաձգումը:

8. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի կեղծիքի և կոռուպցիայի կանխման, բացահայտման և վերացման ծրագրի քննարկում և հաստատում (տեղեկանքը և պլանը կցվում են)

(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 8-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի կեղծիքի և կոռուպցիայի կանխման, բացահայտման և վերացման ծրագիրը.

2) լիազորել ՀՀ էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանին հաստատելու ծրագրով նախատեսված հանձնաժողովի կազմը, իսկ հանձնաժողովի գործունեության ծրագիրը համաձայնեցնել համապատասխան հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

9. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ծրագրի փակման պլանի քննարկում և հաստատում (տեղեկանքը կցվում է)

(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

1. Հարցի քննարկումը հետաձգել՝ ժամանակի սղության պատճառով:

2. Ընդունել ի գիտություն ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար Ա. Գևորգյանի և ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանի առաջարկությունները և դրանց համապատասխան խստացնել կապալառու կազմակերպությունների հետ կնքված և կնքվող պայմանագրերի պահանջները՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների կատարման ժամկետները:

10. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի շահառուների խորհրդի ընտրության արդյունքների քննարկում և հաստատում (տեղեկանքը և ամփոփ հաշվետվությունը կցվում են)

(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

Հարցի քննարկումը տեղափոխել հաջորդ նիստ:

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ, «ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ» ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ — ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ - ՀԱՅԱՍՏԱՆ» ՊՈԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ — ԱՐԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ